

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2015թ. (ՄԱՐՏ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի (ԿԶԿ) 2015թ.-ի գործունեության ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- Կատարել ուսումնասիրություններ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի անմիջական աջակցությամբ իրականացվող «Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում» ծրագրի շրջանակներում (OSCE Project UB 4200665): Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է ուսումնասիրել և վերհանել ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի ու ջրային ռեսուրսների օգտագործման էկոլոգիական խնդիրները, որոնք կարող են խթանել ՀՀ կայուն զարգացմանը, ինչպես նաև ուղղել ուշադրությունը նշված ոլորտներում խնդիրների դասավանդման ու գիտական հետազոտությունների կատարման վրա: Կենտրոնի փորձագետների կողմից նշված թեմայով, ըստ ուղղությունների, աշխատանքների կատարման նպատակներն են:

«Հանքային հումքի ռացիոնալ օգտագործման և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման կառավարման խնդիրները»

- ✓ Շահագործվող մետաղական հանքավայրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, դրանց վերլուծության հիման վրա ձեռնարկությունների աշխատանքի բարելավման հնարավորությունների որոշում, ոլորտում հնարավոր խախտումների բացահայտում:
- ✓ Հանրապետությունում հանքային ռեսուրսների կառավարման վերաբերյալ նյութերի մշակում և վերլուծություն, խնդիրների վերհանում:
- ✓ Հանքավայրերի արդյունահանման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային լավագույն փորձի և առաջատար տեխնոլոգիաների ուսումնասիրում, հավաքագրում ու վերլուծություն, վերջիններիս ՀՀ հանքարդյունահանող ձեռնարկություններում օգտագործման հնարավորությունների գնահատում:
- ✓ Ընդերքօգտագործման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բացասական երևույթների վերացմանն ուղղված միջոցառումների շրջանակների որոշում, հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման քաղաքականության մշակում:
- ✓ Հանքային հումքի նպատակային ու ռացիոնալ օգտագործմանը, արդյունահանման ոլորտի կառավարման բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում:

«ՀՀ ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման և կառավարման խնդիրները»

- ✓ Ստորերկրյա ջրերի պաշարների ծավալների փոփոխության ուսումնասիրում, ավազանների աղտոտմանն ու ջրի որակի անկմանը նպաստող հիմնական

պատճառների, ջրերի օգտագործման նպատակահարմարության ու արդյունավետության պարզաբանում:

- ✓ ՓՀԷԿ-րի շահագործման նպատակահարմարության, նրանց նախագծման և շահագործման հիմնավորվածության և պայմանների ուսումնասիրում: Գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-րի շահագործմամբ պայմանավորված բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրների վերահանում:
- ✓ Ջրային ռեսուրսների օգտագործմամբ պայմանավորված էկոլոգիական խնդիրների վերահանում, ռեսուրսների նպատակային օգտագործման արդյունավետ կառավարման և որակի պահպանման վերաբերյալ նյութերի հավաքագրում, դասակարգում:

«ՀՀ կայուն զարգացման գերակայությունների և նպատակների քննարկում»

- ✓ ՀՀ կայուն զարգացման նպատակների ու գերակայությունների քննարկման նպատակով կայուն զարգացման շրջանակներում ազգային և տարածաշրջանային մակարդակներում տեղեկատվության տարածման և տրամադրման գործողությունների ծրագրերի փորձի վերլուծություն:
- ✓ Կայուն զարգացման գերակայությունների, առկա վտանգներին ու մարտահրավերներին արձագանքման վերաբերյալ հասարակության ներկայացուցիչների և պետական կառույցների շրջանում իրազեկվածության բարձրացման միջոցառումների իրականացում, ընդլայնելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների քննարկման և կայացման գործընթաններում:
- ✓ ՀՀ կայուն զարգացման նպատակների վերաբերյալ թեմատիկ քննարկումների ու խորհրդատվությունների կազմակերպում, կոնկրետ ուղղություններով առաջարկությունների մշակում:
 - Համագործակցել ոլորտում ուսումնասիրություններ իրականացնող առաջատար մասնագետների և տարբեր կազմակերպությունների՝ այդ թվում Հայաստանի Օրհուս Կենտրոնների, բնապահպանական ՀԿ-ների, գիտակրթական և գիտահետազոտական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և ՋԼՄ-ների հետ:
 - Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կլոր սեղանների, սեմինարների, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպում՝ վերահանված խնդիրների քննարկման, կարծիքների փոխըմբռնման և որոշումների լավագույն տարբերակի ընտրության նպատակներով:
 - Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների և ընդունված որոշումների մասին տեղեկատվության տարածում, միջանկյալ և ամփոփիչ հաշվետվությունների կազմում ու հրապարակում, արդյունքների վերլուծության հիման վրա գիտական հոդվածների հրատարակում:
 - ՀՀ Կառավարությանը և համապատասխան գերատեսչական մարմիններին՝ կենտրոնում կատարված ուսումնասիրությունների և կազմակերպված քննարկումների արդյունքներում ձևավորված կոնկրետ առաջարկությունների ներկայացում:

Ձեռնարկված գործողությունների նկարագրությունը

2015թ.-ին ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի գործունեության պլանի համաձայն կատարված աշխատանքները:

- «Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում» ծրագրի շրջանակներում, համաձայն

տեխնիկական առաջադրանքի, ներկայացվում են կենտրոնում իրականացված աշխատանքներն ըստ նշված ուղղությունների:

«Հանքային հումքի ռացիոնալ օգտագործման և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման կառավարման խնդիրները»

- ✓ Հավաքագրվել, դասակարգվել և վերլուծվել է ՀՀ շահագործվող մետաղական հանքավայրերի արդյունահանման վերաբերյալ տեղեկատվությունը:
- ✓ Հանքավայրերի արդյունահանման աշխատանքների նախագծերի և ՇՄԱԳ հաշվետվությունների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունների հիման վրա որոշվել է ոլորտում առկա և հաճախ թույլ տրվող խախտումների շրջանակը:
- ✓ Ուսումնասիրվել և մշակվել են ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և շահագործման/արդյունահանման ոլորտում ընդերքօգտագործման շրջակա միջավայրի պահպանման բաղադրիչների և էկոլոգիական խնդիրների, նոր հանքավայրերի հայտնաբերման ու շահագործման տրամադրման առանցքային հարցերի շրջանակները:
- ✓ Ուսումնասիրվել է ՀՀ տնտեսության մեջ հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը:
- ✓ Կատարվել է հանքավայրերի արդյունահանման եղանակների, հանքաքարերի վերամշակման տեխնոլոգիաների և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային լավագույն, առաջատար փորձի ուսումնասիրում և վերլուծվել է վերջիններիս ՀՀ հանքարդյունահանող ձեռնարկություններում ներդրման ու կիրառման հնարավորությունները:
- ✓ Ուսումնասիրվել են ընդերքօգտագործողների կողմից պետական մարմիններին տրամադրված հաշվետվությունները, քննության են առնվել թեմային առնչվող գիտական հրապարակումները և տնտեսագիտական վիճակագրական վերլուծական աղբյուրներից ստացված նյութերը:
- ✓ Կատարվել է ընդերքօգտագործման օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և նրա շրջանակներում ներկայումս իրականացվող ընդերքօգտագործման արդի իրավիճակի վերլուծություն:
- ✓ Վեր են հանվել ընդերքօգտագործման արդիական հիմնախնդիրները և մշակվել են ոլորտի կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ:

«ՀՀ ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման և կառավարման խնդիրները»

- ✓ Ուսումնասիրվել են Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի պաշարների խնայողության և դրանց արդյունավետ օգտագործման խնդիրները, կապված հատկապես խորը տեղադրված (90-400 մ) ջրատար ճնշումային շերտերից որակապես խմելու ջրին բավարարող պաշարների հիման վրա ձկնային տնտեսության զարգացման նպատակահարմարության հետ:
- ✓ ՓՀԷԿ-րի շահագործման նպատակահարմարության, նրանց նախագծման և շահագործման պայմանների գնահատման նպատակով մանրամասն ուսումնասիրվել են առավել ճգնաժամային և աղետալի վիճակում գտնվող գետային ավազանները, մասնավորապես Մարց և Եղեգիս գետերը: Կազմվել է ՓՀԷԿ-երի տեղաբաշխվածության սխեման ըստ մարզերի:
- ✓ Վեր են հանվել ջրային ռեսուրսների օգտագործմամբ պայմանավորված էկոլոգիական խնդիրները և ռեսուրսների նպատակային օգտագործման ու որակի պահպանման նկատառումներով ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

«ՀՀ կայուն զարգացման գերակայությունների և նպատակների քննարկում»

- ✓ Որոշվել է ազգային կարիքների վրա հիմնված նպատակների ու գործողությունների առաջնահերթությունները: Կատարվել է կայուն զարգացման ոլորտում ազգային և տարածաշրջանային մակարդակներում իրականացվող գործունեության փորձի վերլուծություն և ստացված տեղեկատվության տարածում:
- ✓ Քննարկվել և վերլուծվել են տարբեր ոլորտների կայուն զարգացման գերակայությունների ու մարտահրավերների վերաբերյալ բազմաթիվ հարցեր՝ այդ թվում բարձրագույն կրթության միջազգայնացումը, ներառական կրթության մատչելիությունը, գենդերային հավասարությունը, զիտության ու տնտեսության զարգացումը և այլն:
- ✓ Որոշումների քննարկման և ընդունման գործընթաններում քաղաքացիական հասարակության մասնակցության բարձրացման նպատակով հասարակության ներկայացուցիչների և պետական կառույցների շրջանում իրականացվել են իրազեկվածության բարձրացման համապատասխան միջոցառումներ, թեմատիկ քննարկումներ ու խորհրդատվություններ:
- ✓ Կայուն զարգացման հարցերը ներկայացվել են Tempus PACT նախագծի շրջանակներում Թբիլիսիում կայացած միջազգային գիտաժողովներում (հոկտեմբեր), PICASA ծրագրի շրջանակներում Երևանում կրթության միջազգայնացման վերաբերյալ 1-ին համաժողովում (նոյեմբեր) և Լեհաստանի Ջագելոնիայի համալսարանում կայացած քննարկումների ընթացքում (հունիս):
- Ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման, վերհանված խնդիրների քննարկման, կարծիքների փոխանակման ու փոխըմբռնման և լուծման ուղիների վերաբերյալ որոշումների լավագույն տարբերակի ընտրության նկատառումներով շահագրգիռ կողմերի և ոլորտի խնդիրներով մտահոգ անձանց մասնակցությամբ կազմակերպվել են կլոր սեղան - քննարկումներ, աշխատաժողովներ, սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվություններ և այլ միջոցառումներ: Հանդիպումներից առավել նշանավորները, որոնք ներկայացվում են ստորև, լուսաբանվել են ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից ԵՊՀ պորտալում ու «Երևանի համալսարան» ամսաթերթում, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության վարչության կողմից ԵԱՀԿ գրասենյակի կաքում, Հայաստանի Օրհուս Կենտրոնների կայքի ԿԶԿ-ի էջում, «ԷկոԼուր» լրատվատեղեկատվական պորտալում և հայաստանյան մի շարք ՋԼՄ-ի կողմից:
- ✓ Ս.թ. մայիսի 26-ին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նիստերի դահլիճում կազմակերպվել է կլոր սեղան «ՀՀ մետաղական հանքավայրերի արդյունահանման հետ կապված առանցքային հարցերը» թեմայով: Միջոցառմանը մասնակցել են ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Հայաստանի Օրհուս Կենտրոնների, բնապահպանական ՀԿ-ների, գիտահետազոտական կենտրոնների, ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչներ, փորձագետներ, ուսանողներ և ուրիշներ: Հանդիպմանը թեմայի շուրջ առանձին զեկուցումներով հանդես են եկել կենտրոնի փորձագետներ Ռ.Ս. Մովսեսյանը, Ս.Ա. Գրիգորյանը և Շ.Վ. Խաչատրյանը: Հիմնական զեկուցումներին հաջորդել է բուռն քննարկում, հարց ու պատասխան և առանձին ելույթներ:
- ✓ Ս.թ. հունիսի 29-ին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նիստերի դահլիճում կազմակերպվել է սեմինար «ՀՀ տարածքում ջրահոսքերի վրա հիդրոէկոլոգիայի կառուցման և շահագործման խնդիրները թեմայով», զեկուցող՝ կենտրոնի փորձագետ Ս. Քելյան: Միջոցառմանը մասնակցել են ԵԱՀԿ

երևանյան գրասենյակի, Հայաստանի Օրհուս Կենտրոնների, բնապահպանական ՀԿ-ների, գիտահետազոտական կենտրոնների, ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչներ, փորձագետներ, ուսանողներ և ուրիշներ: Նյութի ներկայացմանը հաջորդել է ակտիվ քննարկում, հնչել են բազմաթիվ հարցադրումներ և առանձին ելույթներ:

- ✓ Ս.թ. նեյեմբերի 10-ին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի անմիջական աջակցությամբ և կենտրոնի հետ համագործակցությամբ Երևանի Անի պլազա հյուրանոցի Անի սրահում կազմակերպվել է աշխատաժողով «Հայաստանում բնական՝ հանքային և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու բնապահպանական կառավարումը. խնդիրներն ու լուծման ուղիները» թեմայով: Աշխատաժողովին մասնակցել են պետական մարմինների՝ ՀՀ Բնապահպանության, Էներգետիկայի և բնական պաշարների, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունների ու դրանց կից առանձին ստորաբաժանումների ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների ու կառույցների ներկայացուցիչներ, դեսպաններ, հանքարդյունահանող ընկերությունների, գիտակրթական և գիտահետազոտական կենտրոնների, հասարակական կազմակերպությունների, Հայաստանի Օրհուս Կենտրոնների, ուսումնական հաստատությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, անհատներ, փորձագետներ և ուրիշներ, ընդհանուր թվով մոտ 100 մասնակիցներ: Աշխատաժողովի նախագահողն էր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, կենտրոնի փորձագետ Մ. Գրիգորյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ բնապահպանության նախարար Ա. Գրիգորյանը, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի դեկավար, Դեսպան Ա. Սորոկինը և ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գևորգյանը: Աշխատաժողովը բաղկացած էր երեք հիմնական բաժիններից՝ «ՀՀ հանքարդյունաբերության հիմնախնդիրները», «Հանքային և ջրային ռեսուրսների օգտագործման քաղաքականությունը» և «Հանքային ռեսուրսների կառավարման կազմակերպումը»: Յուրաքանչյուր բաժնում կենտրոնի փորձագետները զեկուցեցին օրակարգով նշված թեմաներով կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց ուղղությամբ հիմնական առաջարկությունները, որոնց հաջորդեցին բուռն քննարկումները հարց ու պատասխանի տեսքով, ինչպես նաև եղան առանձին ելույթներ մասնակիցների կողմից: Միջոցառման ավարտին նախագահողի կողմից ամփոփվեցին հնչեցված կարծիքները և որոշում կայացվեց ձևավորել կոնկրետ առաջարկություններ, որոնք կներկայացվեն ՀՀ Կառավարությանը վերհանված խնդիրների լուծման նպատակով:
- Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների և ընդունված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է ԵՊՀ ֆակուլտետներում, ինչպես նաև դրանք պարբերաբար կազմված հաշվետվությունների հետ միասին հասանելի են դարձել ՀՀ հասարակության տարբեր մակարդակների համար՝ ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի կայք էջ (www.aarhus.am), ԵՊՀ պորտալ ու «Երևանի համալսարան» ամսաթերթ (www.ysu.am) և տարբեր ՁԼՄ-ներում լուսաբանումների օգնությամբ: Արդյունքների վերլուծության հիման վրա հրատարակման է ներկայացվել «Բնապահպանական հատկացումները և ընդերքօգտագործման օբյեկտների ապահովագրումը» թեմայով գիտական հոդված:
- ՀՀ Կառավարությանը ներկայացվել են կենտրոնում կատարված ուսումնասիրությունների և կազմակերպված քննարկումների արդյունքներում ձևավորված կոնկրետ առաջարկություններ:

Ծրագրերի իրականացման արդյունքները

Ստորև ներկայացվում են «Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում» ծրագրի իրականացման ժամանակ յուրաքանչյուր թեմայով կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

«Հանքային հումքի ռացիոնալ օգտագործման և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման կառավարման խնդիրները»

- ՀՀ-ում հանքավայրերը շահագործվում են կամայական սկզբունքով, հաշվի չեն առնվում փորձաքննություններ անցած աշխատանքային նախագծերում ներկայացված ցուցանիշներն ու պահանջները: Տարեց տարի ավելացվում են հանքավայրերից արդյունահանվող հանքաքարերի քանակը, շրջանցելով արտադրողականության նախագծային ծավալները՝ այն գերազանցելով 2-3 անգամ:
- Փորձաքննության ոլորտում հատկապես խոցելի է համարվում ընդերքաբանական փորձաքննությունը: Վառ օրինակներ են հանդիսանում Արմանիսի, Ամուլսարի, Շամլուղի, Արջուտի, Թուխմանուկի և մի շարք այլ հանքավայրերի շահագործման աշխատանքային նախագծերի փաստաթղթային փաթեթները, որոնցում ընդերքի, հատկապես օգտակար հանածոների քանակության վերաբերյալ բերված տեղեկատվությունը չի ենթարկվել համապատասխան և լիարժեք ընդերքաբանական փորձաքննության: Փորձաքննության ներկայացվող հայտում առկա փաստաթղթերը բերվում են մի շարք սխալներով, հատկապես պարունակում են պաշարների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկատվություն, հանքավայրի արտադրողականությունը չի համապատասխանում ֆաբրիկայի արտադրողականությանը, նյութը ներկայացվում է տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Փորձագիտական եզրակացությունները հիմնականում աշխատանքային նախագծի դրույթների արտագրություններ են առանց լուրջ և խորը մեկնաբանությունների կամ գնահատումների: Գնահատականներ, իրատեսականություն պահանջող հարցերը փորձագիտական եզրակացություններում չեն շոշափվում:
- ՀՀ-ում շահագործվող, շահագործման աշխատանքների ընդլայնման կամ արդյունահանման նախապատրաստվող հանքավայրերի թույլտվությունների ստացման համար՝ ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 59 հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան, չի իրականացվում հանքավայրերի կոնդիցիաների վերանայում և պաշարները չեն ենթարկվում վերագնահատման, համապատասխանաբար չի իրականացվում նաև վերը նշված ընդերքաբանական փորձաքննության պահանջները: Արդյունքում ՀՀ մի շարք հանքավայրեր շարունակում են շահագործվել դեռևս սովետական տարիներին հաստատված կոնդիցիոն ցուցանիշներով և դրանց հիման վրա հաշվարկված և հաստատված պաշարներով՝ նույնիսկ հանքավայրի շահագործման եղանակների փոփոխության դեպքում: Նույնը նկատվում է նաև մեր օրերում իրականացվող պաշարների հաշվարկման և հաստատման գործընթացներում, որոնք կրկին կատարվում են հին կոնդիցիոնարի հիման վրա:
- Բոլոր հանքավայրում խախտված են հանքավայրերի շահագործման տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման կետերը և չեն իրականացվում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումները:
- Լեռնահարստացման ֆաբրիկաները չեն ապահովում հանքաքարից մետաղների ամբողջական կորզումը, կորզման ցուցանիշներ ցածր են և լավագույն դեպքում հասնում են մինչև 75-80 %-ի տարբեր մետաղների համար:

- Ընդերք օգտագործող ընկերությունների գերակշռող մասը չի կատարում ընդերքօգտագործման պարտավորությունները: Տասնյակ հանքավայրերում, որոնց շահագործման համար տրամադրված են թույլտվություններ, տարիներով արդյունահանում չեն իրականացնում: Ուսումնասիրության նպատակով տրամադրված թույլտվություններ ունեցող ընկերությունների հիմնական մասը իրենց տրամադրված տեղամասերում երկրաբանական ուսումնասիրություններ չեն իրականացնում: Մի մասն էլ, առանց որևէ երկրաբանահետախուզական աշխատանք իրականացնելու, նախկին տվյալների հիման վրա ներկայացնում են հաշվետվություններ:
- Առանց երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու լիազոր մարմնի կողմից ուսումնասիրության թույլտվությունները երկարաձգվում են՝ շրջանցելով ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի պահանջները: Երևակումներում ուսումնասիրություններ իրականացնելու համար շուրջ 50 ընդերքօգտագործողի կողմից ներկայացրած նախահաշվի գումարը 10 միլիարդից ավելի է: Դրանք չեն ծախսվում և որևէ լուրջ երկրաբանական ուսումնասիրություն չի արվում:
- Արդյունահանողների և մինչև անգամ լիազոր մարմինների կողմից ընդերքօգտագործման ոլորտում որոշ տերմինների տրվում են բազմաբովանդակ մեկնաբանություններ ըստ իրենց ձեռնտու տարբերակների: Դա հատկապես վերաբերվում է արտադրական լցակույտերին՝ դատարկ ապարների և ոչ կոնդիցիոն հանքաքարերի կուտակումներին, հանքաքարերի հարստապոչերին, որոնք կարող են կուտակվել ինչպես պոչամբարներում, այնպես էլ կույտային տարավացման հարթակներում: Վերջիններս դիտարկվում են որպես տեխնաձին հանքավայրեր կամ որպես դատարկ ապարներ, ինչը երկու դեպքում էլ համարվում է սխալ մոտեցում ու չի համապատասխանում իրականությանը և միաժամանակ ընդերքօգտագործողին ազատում է լրացուցիչ վճարների կատարումից:
- Ընդերքօգտագործման ոլորտում նկատելի է որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածության պակաս կամ նրանք առհասարակ բացակայում են: Լեռնահանքային արդյունաբերական համալիրների մասնագիտական վերազինման հարցն այսօր առաջնահերթությունների ցանկում է: Շատ ընկերություններ չունեն համապատասխան մասնագիտացված ծառայություններ՝ լեռնաերկրաբանական, մակշեյդերական և այլն, իսկ եղած մասնագետները վերապատրաստման կարիք ունեն և չեն աստեստավորվում:
- Ընդերքօգտագործման ոլորտի աշխատանքները կարգավորող հրահանգների մեծ մասը համապատասխան որոշումներով ուժը կորցրած են ճանաչվել, իսկ նորերն էլ դեռևս մշակված և կյանքի կոչված չեն, ինչը չափազանց մեծ դժվարություններ են ստեղծում արդյունահանող ձեռնարկությունների գործունեության վերահսկողության կազմակերպման համար:
- Լեռնահանքային գործունեության ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք թերություններ, ինչը բերում է ընդերքի հանքային ռեսուրսների օգտագործման կառավարման ոչ ճիշտ կազմակերպմանն ու ընդերքօգտագործման հատվածով բյուջեյի ոչ ամբողջական հավաքագրմանը:
- ՀՀ հանքավայրերի անձնագրերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 22.11.2012 թիվ 1571-Ն որոշման կարգին:

«ՀՀ ջրային ռեսուրսների նպատակային օգտագործման և կառավարման խնդիրները»

- Արարատյան արտեզյան ավազանի ջրային պաշարները քանակական և որակական տեսակետից վտանգված են, որը հետևանք է, հիմնականում, ավազանի ջրային պաշարների ոչ նպատակային և ոչ արդյունավետ շահագործման: Դրա հիմնական պատճառն է ձկնային տնտեսությունների գործունեությունը: Պարզվել է, որ տարեկան

մոտ 1 մլրդ խոր.մ ջուր է վերցվում Արարատյան արտեզյան ավազանի խորը տեղադրված ջրատար շերտերից՝ ձկնային տնտեսության գործունեության համար, որը հիմնականում թափվում է Արաքս գետը, իսկ մի որոշ քանակություն հոսում է տարածության մեջ՝ առաջացնելով հողերի ճահճացում: Նման քանակությամբ ջրառը վտանգավոր է այն տեսակետից, որ ժամանակի ընթացքում չի վերականգնվում նշված ջրատար շերտում ջրի քանակությունը, որը բերում է շերտում ճնշման անկմանը: Այն իր հերթին բերում է բարձր հանքայնացում և կոշտություն ունեցող ջրերի տարբեր ճանապարհներով ներթափանցմանը նշված ջրատար հորիզոն՝ առաջ բերելով նշված հորիզոնի ջրի որակական ու քանակական փոփոխության և վերջինս դարձնելով ոչ պիտանի խմելու ջրի օգտագործման համար: Վերլուծելով ձկնային տնտեսության գործունեության արդյունքում ձեռք բերած տնտեսական օգուտները և արտեզյան ավազանի խմելու ջրի պաշարների կրճատման և գալիքում դրա վերացմանը, եկել ենք այն եզրակացությանը, որ ձկնային տնտեսության զարգացումը Արարատյան արտեզյան ավազանում վնասակար է և ոչ հեռանկարային, թե տնտեսապես և թե բնապահպանական խնդիրների առաջացման տեսակետից: Վերլուծելով իրավիճակը երկարաժամկետ կտրվածքով՝ համարում ենք, որ ձկնային տնտեսության գործունեության արդյունքում հասցված վնասներն ավելի մեծ են և անդառնալի, քան այն տնտեսական օգուտները, որ ստանում ենք այսօր:

- ՀԷԿ-ի շինարարությունն էական վտանգ է հասցնում բնությանը, խախտում է էկոլոգիական հավասարակշռությունը և հանգեցնում շրջակա միջավայրում բազմաթիվ հիմնախնդիրների առաջացման: ՀԷԿ-ը խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմը, խոչընդոտում ձկների բազմացմանը և կառուցվում են առանց բնակչության շահերի և կարծիքների հաշվի առնման:
- Գետի էկոհամակարգի կործանումը հիմնականում տեղի է ունենում այն պատճառով, որ ՓՀԷԿ-ը գործում են առանց սահմանափակման՝ օգտագործելով գետի առավելագույն ջրի հոսքը: «Էկոլոգիական թողք» հասկացությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 30.06.2011թ. 927Ն որոշմամբ, որում ասված է. «Ուսումնասիրված գետավազանների ներկայումս գործող հիդրոլոգիական դիտակետերի համար բնապահպանական թողքի արժեքը որոշելիս որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն ելքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին ելքը»: Սա նշանակում է, որ եթե գետը չորացել է և կամայականորեն ընտրված տարվա ցանկացած 10 օրվա ընթացքում նրանում արձանագրվել է զրոյական ջրհոսք, ապա այդ 0.0 խոր.մ/վրկ ցուցանիշը կարելի է ընդունել որպես սանիտարական թողք: Սակայն նույնիսկ այս պայմանը չի պահպանվում և ՓՀԷԿ-երը չեն ապահովում էկոլոգիական թողք:
- Կազմվել է ՀՀ-ի թվով 173 ՓՀԷԿ-րի տեղաբաշխվածության աղյուսակն ըստ մարզերի

<i>Մարզը Քանակը</i>	<i>ՓՀԷԿ</i>	<i>Բնական ջրահոսք</i>	<i>Ոռոգման համալիր</i>	<i>Հաշվարկային</i>	<i>Խմելու ջրատար</i>
Սյունիք	49	32	11	5	1
Վայոց ձոր	29	25	3	1	0
Լոռի	26	18	6	1	1
Կոտայք	16	11	2	2	1
Գեղարքունիք	14	9	5	0	0
Տավուշ	14	8	4	2	0
Արագածոտն	10	4	3	0	3
Շիրակ	8	4	2	1	1
Արմավիր	4	0	2	2	0
Արարատ	2	1	1	0	0
Երևան	1	0	0	0	1

- Համաձայն էկոլոգիական ստանդարտների 20 %-ից ավել ջրառը բերում է գետի ճգնաժամային վիճակի, իսկ 40%-ից ավելին՝ աղետալի վիճակի: Ստորև նշում ենք ՀՀ-ում ձկնաժամային վիճակում գտնվող մի քանի գետեր:
 - ✓ Արտավան գետ՝ հոսում է Վայոց Ձորի մարզով, սկիզբ է առնում Զանգեզուրի և Վայքի լեռների հանգուցատեղից և Գետիկվանք գյուղի մոտ ձախից միախառնվում Դարբ գետին, երկարությունը 19 կմ: Այս գետի վրա գործում է «Արտավան-1» ՓՀԷԿ-ը և նախատեսվում է կառուցել ևս երկուսը, որոնց լիցենզիա է տրվել 07.08.2013թ.: ՀԷԿ-ի կառուցման և շահագործումից հետո գետը կհայտնվի ճգնաժամային վիճակում:
 - ✓ Արգիճիա գետ՝ սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից, երկարությունը 51 կմ, Սևանա լիճ թափվող ամենաջրառատ գետն է և հանդիսանում է էնդեմիկ ձկնատեսակների ձվադրման վայր, որոնք վերացման եզրին են գետի վրա գործող ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով:
 - ✓ Դարբ գետ՝ հոսում է Վայոց Ձորի մարզով, սկիզբ է առնում Զանգեզուրի լեռերի Որոտանի լեռնանցքից և խառնվում է Արփային, ունի 22 կմ երկարություն, գործում է 1 ՀԷԿ, որի խողովակաշարի երկարությունը 4.5 կմ է և խողովակի մեջ է վերցնում գրեթե գետի 20 %:
 - ✓ Փամբակ գետ՝ համարվում է Դեբետի հիմնական վտակը, երկարությունը 86 կմ, գետում գործում է 3 ՓՀԷԿ և գումարային հաշվով խողովակի մեջ է վերցվում գետի մոտավորապես 24 %:
 - ✓ Գեղարոտ գետ՝ հոսում է Արագածոտնի մարզով, սկիզբ է առնում Արագածի արևելյան լանջից, ունի 25 կմ երկարություն, միախառնվում է Քասախին: Գործում է 2 ՓՀԷԿ և խողովակների մեջ է վերցված գետի 28%:
 - ✓ Կիստում գետը՝ հոսում է Լոռու մարզով, սկիզբ է առնում Մրձաքար լեռան հյուսիսային լանջից և թափվում է Դեբետ գետը, երկարությունը 13 կմ, գործում է 2 ՀԷԿ մոտ 6.5 կմ գումարային երկարությամբ խողովակաշարով և կարելի է ասել, որ գետի ուղիղ կեսը հոսում է խողովակի միջով, հասցնելով գետին աղետալի վիճակում:
 - ✓ Մարց գետ՝ հոսում է Լոռու մարզով, սկիզբ է առնում Գուգարաց լեռնաշղթայի հարավարևելյան լանջերից երկարությունը 22 կմ է: Գործում է 2 ՀԷԿ մոտ 10 կմ գումարային խողովակաշարի երկարությամբ, վերցնելով գետի ջրի 30 %:
 - ✓ Եղեգիս գետ՝ Արփայի աջ վտակը, սկիզբ է առնում Վարդենիս լեռան հարավային լանջերից, հոսում է Վայոց Ձորի մարզով, երկարությունը 47 կմ է, գործում է 12 ՀԷԿ, վերցվում է գետի ջրի 50 %-ից ավելին, որն անթույլատրելի ցուցանիշ է և գետը գտնվում է աղետալի վիճակում:
- Օրենքով արգելում է ՓՀԷԿ-րի կառուցումը հատուկ պահպանվող տարածքներում: Մակայն ՀԷԿ-երը կառուցվում են ազգային պարկերում, արգելավայրերում՝ խախտելով «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքները, «Կենսաբազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: ՓՀԷԿ-րը հաճախ կառուցվում են անտառային կամ անտառներին հարող տարածքներում՝ հսկայական անտառահատումներով, որը նույնպես անթույլատրելի է:
- ՀԷԿ-րի կառուցում ժամանակ հաշվի չեն առնվում սողանքային գործընթացները և հողի փխրունությունը: Ինտենսիվ շինարարական աշխատանքներից, խողովակների անցկացումից հետո սողանքավտանգ գոտում սողանքային երևույթներն ակտիվանում են:
- Ոչ ՓՀԷԿ-րի նախագծերում, ոչ նրանց շահագործման ընթացքում հաշվի չի առնվում ՓՀԷԿ-րի ազդեցությունը համայնքների բարեկեցության վրա: Այս հարցը ստացել է սուր սոցիալական հնչեղություն և համայնքներում արդեն ստեղծում է սոցիալական լարվածություն: Մարդիկ զրկվում են մարգագետիններից, արոտավայրերից, հանգստյան

գոտիներից, այսինքն տուժում են այն ոլորտները, որոնք բնակիչների ապրուստը ապահովող միակ միջոցն են:

«ՀՀ կայուն զարգացման գերակայությունների և նպատակների քննարկում»

- Քննարկումների անցկացումը թույլ է տալիս կայուն զարգացման ոլորտում բարձրացնել պրոբլեմների և գերակայությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածությունը, ինչպես նաև մեծացնել շահագրգիռ կողմերի սեփական գործունեությանն առնչվող զգացողությունները:
- Այնպիսի խնդիրները, ինչպիսիք են միջազգային գիտական համագործակցության զարգացումը, երբ կրթության միջազգայնացումը դառնում է կայունության արդյունքների, եկամուտների և եզրահանգումների հիմք՝ հատուկ ուշադրության կարիք են զգում: Կրթությունը, մասնավորապես բարձրագույն կրթության միջազգայնացումը, ծառայում է որպես որակի ապահովման երաշխիք: Այս ամենը հասարակական մշակույթում հիմնում է որակի զարգացման և դրա վարքաբանության զարգացման շղթա:
- Որակյալ կրթություն նշանակում է շրջանավարտների որակի դրական ազդեցություն, նրանց դարձնելով ավելի մրցունակ աշխատանքի շուկայում, որը կհանգեցնի զբաղվածության առավել բարձր մակարդակի, դրականորեն ազդելով սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ բարձրացնելով եկամուտների մակարդակը և նվազեցնելով աղքատությունը, հատկապես կրթության որակի և ներառական կրթության առավել հասանելիության միջոցով:

Օրագրի հիմնական եզրակացությունները և գնահատականը

Օրագրի նպատակներն իրականացված են, որոնց արդյունքում մշակվել են կոնկրետ առաջարկություններ: Այսպիսով անհրաժեշտ է՝

- ✓ Ձեռնարկությունների արտադրողականության, կորզման աստիճանի և այլ տեխնիկական-տնտեսագիտական ցուցանիշները պետք է լինեն բաց ու թափանցիկ, որպեսզի հնարավոր լինի գնահատել նրանց աշխատանքի արդյունավետությունը:
- ✓ Հանքավայրերի շահագործումն անհրաժեշտ է իրականացնել բացառապես փորձաքննություններ անցած նախագծերի շրջանակներում: Չթույլատրել առանց որևէ հիմնավորման ավելացնելու հանքավայրի արտադրողականության ցուցանիշները: Լեռնահանքային ձեռնարկություններին արգելել կատարելու տեխնոլոգիական պրոցեսների ինքնակամ փոփոխություններ: Պարտադրել արտադրական պրոցեսում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, ինչը կբերի հիմնական և ուղեկից մետաղների լիարժեք կորզմանը և կապահովի լրացուցիչ եկամուտների ներհոսք:
- ✓ Բարձրացնել բնապահպանական և բնօգտագործման վճարների չափերը: Անհրաժեշտ է վերանայել ընդերքօգտագործողների բնապահպանական միջոցառումների կատարման համար ներդրումային հատկացումների նորմատիվները: Ներկայումս դրանց հաշվարկը կատարվում է հին նորմերով և 10-100 անգամ տարբերվում է (նվազ է) համաշխարհային միջին ցուցանիշներից: Վերանայման կարիք են զգում նաև բնօգտագործման, այդ թվում ռոյալթիի, շահութահարկի տոկոսադրույքները՝ դեպի ավելացման ուղղությամբ: Իսկ գերշահույթների դեպքում անհրաժեշտ է կիրառել հարկման “պրոգրեսիվ” ձևը: Առաջարկվում է պոչամբարներ թափվող տեխնոլոգիապես կորզվող մետաղների քանակության համար նույնպես սահմանել բնօգտագործման (ռոյալթի) վճարներ:
- ✓ Անհրաժեշտ է վերանայել հանքավայրերի և նրանց արդյունահանման թափոնների ռեկուլտիվացման և կոնսերվացման պահանջներն ու վճարումների չափը: Վերջիններս նույնպես կտրուկ նվազեցված են պահանջվող չափերիչ և էապես տարբերվում են

նմանատիպ հանքավայրերում վճարումների համաշխարհային ցուցանիշներից, որը ոչ մի դեպքում չի կարող ապահովել հանքավայրի և նրա թափոնների ռեկուլտիվացիայի ու փակման աշխատանքների ֆինանսավորումը:

- ✓ Հանքավայրերի և լեռնային ձեռնարկությունների շուրջը, որպես վտանգավոր արտադրության օբյեկտ, անհրաժեշտ է օրենքով կազմակերպել սանիտարապաշտպանիչ գոտիներ՝ որոշելով նրանց չափերը, հաշվի առնելով համաշխարհային լավագույն փորձը: ՀՀ-ում հանքավայրերի և լեռնային ձեռնարկությունների շուրջը սանիտարապաշտպանիչ գոտիները որպես այդպիսին բացակայում են:
- ✓ Շրջանառության մեջ մտցնել ընդերքօգտագործման գործունեության ընթացքում հնարավոր վթարների հետևանքների պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը:
- ✓ Լեռնահանքային ձեռնարկություններին պարտադրել գնահատելու թափոններով պայմանավորված բոլոր հնարավոր աղետները և նրանց վնասների չափերը, հրապարակել շրջակա միջավայր բաց թողնվող ջրերի կազմն ու նրանցում եղած նյութերի պարունակությունները, մոնիթորինգի մյուս բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- ✓ Հանրապետությունում ստեղծել միջազգային ստանդարտներին համապատասխանող անկախ փորձագիտական կենտրոն - լաբորատորիա: Հանրապետությունում ներկայումս գործող լաբորատորիան՝ «Անալիտիկ» ՓԲԸ, չնայած նրան, որ ունի միջազգայնացման որոշակի փաստաթղթեր, այնուամենայնիվ չի կարող համապատասխանել միջազգային պահանջված ստանդարտներին:
- ✓ Վերանայել լեռնահատկացման մակերեսների տրամադրման չափերի և սահմանների որոշման նորմերը: Ներկայումս այն թույլ է տալիս մեծ տարածքների հատկացմանը և դրանց վրա առանց թույլտվության երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացմանը:
- ✓ Լիազոր մարմնի ընդերքօգտագործման ոլորտի ստորաբաժանումներում և հանքարդյունահանող ընկերության լեռնաերկրաբանական ծառայություններում ընդգրկել մասնագիտական կրթություն ունեցող, փորձառու մասնագետների, որոնք պարբերաբար պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ:
- ✓ Առաջարկվում է հնարավորինս կարճ ժամանակահատվածում սահմանափակել և դադարեցնել Արարատյան արտեզյան ավազանի ջրային պաշարների վրա հիմնված ձկնային տնտեսությունների գործունեությունը:
- ✓ Անհրաժեշտ է խստիվ հետևել ՓՀԵԿ-երի կառուցման և շահագործման տեխնիկական նորմերի ու պահանջների կատարմանը և չթույլատրել, որ գերազանցեն գետերից ջրառի թույլատրելի սահմանները:
- ✓ Արդյունաբերության զարգացման և մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ նախապայման է նրա արդիականացման ծրագրերի իրականացումը: Այն պետք է ունենա հստակ ձևավորված սոցիալական կողմնորոշվածություն և կիրառի էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ: Ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, մրցունակ և էկոլոգիապես մաքուր արտադրանքի մշակումը պետք է դարձնել առաջնահերթ խնդիր: Ծրագրերում առաջնահերթ տեղ պետք է զբաղեցնեն սոցիալական ոլորտում իրականացվող քայլերն ուղղված աղքատության կրճատմանը: Վերջինս կարող է օժանդակվել բոլոր խմբերին կրթության հավասար հասանելիության հնարավորություն ընձեռնման միջոցով, որոնք լրացուցիչ կազդեն հասարակության ժողովրդավարացման վրա:
- ✓ Հարևան երկրների հետ համեմատ առավել սահմանափակ ռեսուրսների առկայության պարագայում անհրաժեշտ է ավելացնել Հայաստանում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ֆինանսավորումը, ինչը կնպաստի նաև գիտնականների

սերնդափոխությանը, նրանց միջին տարիքի նվազեցմանն ու Հայաստանից «ուղեղների» արտահոսքի կանխմանը: Կրթության ոլորտը և նրա հետագա միջազգայնացումը որակի ապահովման ու զարգացման համար առանցքային պետք է լինի թույլ տալով կայուն արդյունքների ստացմանն ու նրանց տարածմանը, որոնք ուղղված կլինեն սոցիալ-տնտեսական ոլորտում առաջընթացի կայացմանն ու երկրում աղքատության վերացմանը:

Նշված եզրակացություններից առավել կարևորները առաջարկությունների տեսքով ներկայացվել են ՀՀ Կառավարությանը:

ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները

Ծրագրերի իրականացման արդյունքում առկա են ձեռքբերումներ և սպասվելիք արդյունքներ: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումները հնարավորություն ընձեռեցին կայուն զարգացման խնդիրների վերաբերյալ հասարակության տարբեր խմբերի և կառավարման մարմինների ներսում տեղեկատվության տարածմանն ու իրազեկվածության բարձացմանը՝ պատկան մարմինների և հասարակության ուշադրությունը սևեռելով ՀՀ կայուն զարգացմանը նպաստող գերակա և առանցքային հարցերի վրա: Կլոր սեղանների, սեմինարների, խորհրդակցությունների և աշխատաժողովների ընթացքում քննարկված հարցերը և դրանց լուծման ուղիների վերաբերյալ մշակված առաջարկությունների կյանքի կոչումը կարող են նպաստել հանրապետությունում հանքային և ջրային ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանն ու ճիշտ կառավարմանը, ինչն իր հերթին կբերի երկրի սոցիալ-տնտեսական կարևորագույն խնդիրների լուծմանը: Ծրագրի իրականացման ընթացքում վեր հանված առանցքային խնդիրներն անմիջականորեն կապված են բնական ռեսուրսների արդյունահանման ոչ ճիշտ կազմակերպման ու շրջակա միջավայրի պահպանության ռիսկերի ավելացման հետ: Մեր գնահատումներով վերջիններիս ճիշտ օգտագործման արդյունքում հնարավոր է հասնել բյուջեյի եկամուտների զգալի ավելացմանը և միևնույն ժամանակ նվազեցնել հանքավայրերի շահագործման անվտանգության ռիսկերն ու շրջակա միջավայրին հասցվող վնասները:

Նշված ձեռքբերումներին հասնելուն նպաստում են վեր հանված խնդիրների ու դրանց լուծման ուղիների մշակված առաջարկությունների ու մոտեցումների ներկայացումը կենտրոնի փորձագետների կողմից շահագրգիռ պետական կառույցներում և կազմակերպություններում, տարբեր ֆորումներում, կոնֆերանսներում և այլ միջոցառումներում: Կենտրոնը շարունակում է իր ակտիվ համագործակցությունը ոլորտի խնդիրներով մտահոգ կազմակերպությունների, հասարակության ներկայացուցիչների և հանրապետություն ժամանած միջազգային փորձագետների հետ, ինչը լավագույն արդյունքներին հասնելու կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Ծրագիրն իրականացվել է ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնում, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի
ղեկավար, երկր.-հանք. գիտ. թեկ.

Ռ.Ս. Մովսեսյան

10.12.2015